

*Վերջին փոփոխության ամսաթիվ՝ 02.07.2019
Խմբագրություն՝ 01*

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ծառայությունների սակագները և դրույքաչափերը

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ կարևորում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ իր հաճախորդների լիարժեք տեղեկացվածությունը: Ստորև ներկայացվող Ամփոփագրում հստակ նշված են **ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ** կողմից առաջարկվող ծառայությունների սակագները, ինչպես նաև պարունակում է անհրաժեշտ տեղեկատվություն, որը Ձեզ կօգնի կողմնորոշվել և կայացնել ճիշտ որոշումներ:

Ցանկացած գործարք կատարելուց կամ բանկային ծառայություն ստանալուց առաջ հանգամանորեն ծանոթացեք Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությանը, իսկ պարզաբանումների անհրաժեշտության դեպքում դիմեք մեր մասնագետներին:

Ամփոփագրի վերջին փոփոխությունը կատարվել է 02.07.2019թ.-ին:

Բանկի կողմից մատուցվող ծառայությունների մասին առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ պաշտոնական կայքէջ www.araratbank.am, կամ գրել մեզ araratbank@araratbank.am էլեկտրոնային հասցեով:

Կարող եք զանգահարել նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ հեռախոսային կենտրոն՝ (010) 59 23 23 շուրջօրյա հեռախոսահամարով:

- 1.** Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է սույն սակագների և դրույքաչափերի, ինչպես նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:
- 2.** Ծառայությունների սակագները և դրույքաչափերը (այսուհետ՝ Սակագներ) կարող են փոփոխվել Բանկի կողմից միակողմանի կարգով՝ այդ մասին նախապես ինտերնետում (բանկի պաշտոնական կայքում) կամ այլ հրապարակային աղբյուրներում, և/կամ Բանկի տարածքում՝ հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:
- 3.** Սակագները սահմանված են ՀՀ դրամով իսկ արտարժույթով գործառնությունների տոկոսով սահմանված սակագները հաշվարկվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող տվյալ օրվա արժույթային շուկայում ձևավորվող միջին փոխարժեքով:
- 4.** Սույն սակագներով չսահմանված դեպքերում, գործարքների պայմանները որոշվում են առանձին պայմանագրերով կամ Բանկի այլ ներքին իրավական ակտերով:
- 5.** ԱԱՀ-ով հարկվող գործարքների սակագները ներառում են ավելացված արժեքի հարկը, ինչի վերաբերյալ սակագներում առանձին նշում է կատարված:
- 6.** Միջնորդավճարներն անվիճելի կարգով ելքագրվում են հաշվետերերի հաշիվներից, եթե այլ բան սահմանված չէ Բանկի և հաշվետիրոջ միջև կնքված պայմանագրերով:
- 7.** Առանձին դեպքերում Բանկի վարչության որոշմամբ Բանկի և հաշվետերերի միջև կնքվող պայմանագրերով կարող են սահմանվել այլ սակագներ:
- 8.** Սակագների փոփոխությունները, այդ թվում որոշակի ժամկետում այլ սակագնի կիրառումը, կատարվում են Բանկի վարչության որոշումներով:
- 9.** Բանկը պատասխանատվություն չի կրում՝
 - ա)** հաճախորդի ոչ ճիշտ ցուցումների,
 - բ)** իր տարածքից դուրս կապի միջոցների անսարքությունների,
 - գ)** անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, համաճարակներ, գործադուլներ, շրջափակումներ, ռազմական և արտակարգ դրություն, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, պետական մարմինների ակտեր և այլն) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

Բանկի գլխամասային գրասենյակում և Նոր-Նորք մասնաճյուղում անհատական բանկային պահատեղերի վարձակալության սակագներ*.

Անհատական բանկային պահատեղերի տրամադրում			
Վարձակալության ժամկետ	Փոքր (սմ)	Միջին (սմ)	Մեծ (սմ)
	43,0x27,0x7,5	43,0x27,0x16,0	43,0x55,0x16,0
7 օր	2.000 ՀՀ դրամ	4.000 ՀՀ դրամ	10.000 ՀՀ դրամ
14 օր	4.000 ՀՀ դրամ	6.000 ՀՀ դրամ	12.500 ՀՀ դրամ
1 ամիս	6.000 ՀՀ դրամ	9.000 ՀՀ դրամ	15.000 ՀՀ դրամ
3 ամիս	8.000 ՀՀ դրամ	18.000 ՀՀ դրամ	25.000 ՀՀ դրամ
6 ամիս	15.000 ՀՀ դրամ	25.000 ՀՀ դրամ	30.000 ՀՀ դրամ
9 ամիս	20.000 ՀՀ դրամ	28.000 ՀՀ դրամ	35.000 ՀՀ դրամ
12 ամիս	25.000 ՀՀ դրամ	33.000 ՀՀ դրամ	45.000 ՀՀ դրամ

Մինչև 7 օր պահատեղերի վարձակալության դեպքում, յուրաքանչյուր օրվա համար գանձվում է՝

Փոքր* (սմ)	Միջին* (սմ)
43,0x27,0x7,5	43,0x27,0x16,0
600 ՀՀ դրամ	1.000 ՀՀ դրամ

ԶԱՐԳԱՑՈՒՄ մասնաճյուղում անհատական բանկային պահատեղերի վարձակալության սակագներ*

Ժամկետ	Պահատեղերի չափսերը (սմ)					
	9,5x30,0x55,9 9,0x30,0x50,0 7,4x30,0x43,0	14,3x30,0x55,9 12,6x30,0x43,0	18,0x30,0x50,0	19,0x30,0x55,9	28,5x30,0x55,9	18,0x66,0x50,0
1 ամիս	6.000 ՀՀ դրամ	12.000 ՀՀ դրամ	14.000 ՀՀ դրամ	15.000 ՀՀ դրամ	18.000 ՀՀ դրամ	25.000 ՀՀ դրամ
6 ամիս	12.000 ՀՀ դրամ	24.000 ՀՀ դրամ	30.000 ՀՀ դրամ	36.000 ՀՀ դրամ	42.000 ՀՀ դրամ	50.000 ՀՀ դրամ
12 ամիս	18.000 ՀՀ դրամ	36.000 ՀՀ դրամ	45.000 ՀՀ դրամ	50.000 ՀՀ դրամ	60.000 ՀՀ դրամ	75.000 ՀՀ դրամ

Գյումրի 2 մասնաճյուղում անհատական բանկային պահատեղերի վարձակալության սակագներ*

Ժամկետ	Պահատեղերի չափսերը (սմ)	
	5,0x26,0x38,0	12,0x26,0x38,0
1 ամիս	5.000 ՀՀ դրամ	10.000 ՀՀ դրամ
6 ամիս	10.000 ՀՀ դրամ	20.000 ՀՀ դրամ
12 ամիս	15.000 ՀՀ դրամ	35.000 ՀՀ դրամ

Օսնուցում.

* Ներառյալ ԱԱՀ

- Պահատեղի դիմաց վարձավճարի չվճարման կամ պահատեղը պայմանագրով սահմանված ժամկետում չհանձնելու դեպքում, Բանկը Հաճախորդից գանձում է տուգանք՝ սկսած 6-րդ օրվանից յուրաքանչյուր ուշացած օրվա համար՝ 1.200 ՀՀ դրամ.
- Հաճախորդի կողմից կորցրած կամ վնասված բանալու պատրաստման համար՝ 15.000 (տասնհինգ